

«ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ-ի Խորհուրդը, հանդիսանալով Բանկի կորպորատիվ կառավարման համակարգի կարևորագույն տարրերից մեկը, իրականացնում է Բանկի ընդհանուր գործունեության կառավարումը, սահմանում է Բանկի երկարաժամկետ ռազմավարությունը և գործունեության առաջնային ուղղությունները՝ գործելով ՀՀ օրենսդրության, Բանկի Կանոնադրության և Բանկի ներքին իրավական ակտերի հիման վրա:

Խորհրդի բացառիկ իրավասությանն են վերաբերում՝

- Բանկի գործունեության առաջնային ուղղությունների որոշումը, Բանկի տարեկան բիզնես պլանի հաստատումը, ինչպես նաև դրա լրացումները կատարումը, իրականացման նկատմամբ վերահսկումը,
- Տարեկան և արտահերթ Ժողովների հրավիրում, դրանց օրակարգերի հաստատում, Ժողովի քննարկմանը հարցերի ներկայացում՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դեպքերում, և Ժողովին ներկայացվող հարցերով առաջարկների ներկայացում,
- Գլխավոր տնօրեն-Տնօրինության Նախագահի և Տնօրինության անդամների նշանակում, նրանց լիազորությունների վաղաժամկետ դադարեցում, Տնօրինության գործունեության ընթացակարգի հաստատում և վերահսկում նրանց գործունեության նկատմամբ,
- Բանկում ներքին վերահսկողության չափանիշների սահմանում համաձայն ներքին վերահսկողության նվազագույն պայմանների՝ սահմանված ՀՀ ԿԲ նորմատիվ իրավական ակտերով,
- ՀՀ օրենսդրությամբ սահմանված Բանկի կողմից ֆինանսական գործարքների իրականացման կարգը սահմանող ներքին իրավական ակտերի ընդունում, տարածքային և ինքնուրույն կառուցվածքային ստորաբաժանումների կանոնադրությունների հաստատում,
- Բանկի վարչակազմակերպրական կառուցվածքի հաստատում, Բանկի տարածքային ստորաբաժանումների ստեղծում և լիկվիդացում,
- ՀՀ օրենսդրությամբ և Բանկի Կանոնադրությամբ նախատեսված այլ հարցեր:

Բանկի Խորհրդի անդամները նշանակվում են Բանկի Ժողովի կողմից՝ ՀՀ օրենսդրությամբ և Բանկի Կանոնադրությամբ սահմանված կարգով: Խորհրդի անդամի պաշտոնի թեկնածուներին կարող են առաջադրել բաժնետերերը և/կամ Խորհուրդը: Առաջադրվող թեկնածուների քանակը չի սահմանափակվում, և Ժողովը անցկացնում է քվեարկություն ներկայացված յուրաքանչյուր թեկնածուի վերաբերյալ՝ ՀՀ օրենսդրությամբ և Բանկի Կանոնադրությամբ սահմանված կարգով: Բանկի Խորհրդի անդամները չեն կարող հանդիսանալ փոխկապակցված անձ: Խորհրդի անդամների լիազորությունների ժամկետը սահմանվում է Ժողովի կողմից և չի կարող լինել 1 տարուց պակաս:

Ներկայումս «ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ Խորհուրդը կազմված է 5 անդամներից: